

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Կարեն Մանուկով	Տնօրենների խորհրդի նախագահ	Տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար
Վահրամ Թեպելիկյան	Տնօրեն	Ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Ռուբեն Ներսիսյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Մանվել Սահակյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Օլգա Գասպարյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Վարազդատ Ներսիսյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Դոնարա Սայամյան	գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար

12.11.2010թ.

**«ԱԼՄԱՍ» ԲԲԸ
2010Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ)**

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

- 1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է ընկերությունը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել ընկերության ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք ընկերության կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ալմաստային գործիքների արտադրությունն է: Դրանցից են քար կտրող, հղկող, ապակի կտրող գործիքները: Մանրածախ գներով հաշվարկի դեպքում 2010 թ. III եռամսյակի ընթացքում արտադրվել է 22 645 000 դրամի արտադրանք: Արտադրության հումքը (մետաղ, օլոֆ, պղինձ և այլն) Ընկերությունը ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից և Չինաստանից: Հաշվետու եռամսյակում Չինաստանից որպես հումք ձեռք է բերվել ալմաստափոշի 1 169 284 դրամի: Արտադրանքի վաճառքի գները 2010 թ. III եռամսյակի ընթացքում կայուն են եղել: Այդ ընթացքում իրացվել է 26 753 000 դրամի արտադրանք: Արտադրանքի իրացումը հիմնականում լինում է տեղական շուկայում: Ընկերությունում առկա արտադրանքի մնացորդը 01.01.2010 թ. և 01.10.2010թ. դրությամբ բերված է աղյուսակում.

Աղյուսակ 1

«Ալմաստ» ԲԲԸ-ում առկա արտադրանքի մնացորդը (դրամ)

	Պահեստում	
01.01.2010 թ.	379 184 000	
01.10.2010թ.	370 423 295	

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2010թ. III ԵՌԱՄՍՅԱԿ

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-66058
Իրացման ծախսեր	-1015
Վարչական ծախսեր	-46610
Գործառնական գործունեությունից շահույթ	-53698
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ	11882
2010թ. III եռ. զուտ շահույթ	-41816
Հիմնական միջոցները 01.10.2010թ.	923300
Կանոնադրական կապիտալը	418 217
Դեբիտորական պարտք	19648
Կրեդիտորական պարտք	1114737

Աղյուսակ 3

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2010թ. III եռ.*

Ցուցանիշի անվանումը	01.10.2010 թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-0,099
Մեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-0,082
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-0,025
Զուտ շահույթի մարժա (NPM)	-0,688
Կապիտալի համարժեքության գործակից	0,31
Ֆինանսական կախվածության գործակից	2,187
Բացարձակ իրացվելության գործակից	0,008
Ընթացիկ իրացվելության գործակից	0,48
Ընդհանուր իրացվելության գործակից	16,697
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3,443
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	106,01
Պաշարների շրջանառելիության գործակից	-0,394
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	-926,39
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	-0,059
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	-6186,44

* Գործակիցների հաշվարկման ժամանակ միջանկյալ ժամանակաշրջանի (կիսամյակի) ցուցանիշները տարեկանացված են:

2) Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել: Սակայն նշենք, որ զեկույցը կազմելու պահի դրությամբ Ռուսաստանի Դաշնությունից պատվերներ չկան, իսկ տեղական պատվերները անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են: